

**ՀԵՌԱՀԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՄԲ  
«ՍՄԱՐԹ» ՀԱՇՎԻ<sup>1</sup> ԲԱՑՄԱՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ / ՍՈՒՍՅԼ ԲԱՆԿԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
ՀԱՅՏ-ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**1. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ**

- 1.1. Սույնով հանձնարարում եմ Ամերիաբանկ ՓԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ, իսկ Բանկը և Հաճախորդը առանձին-առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր) ինձ (Հաճախորդի) հետ հաղորդակցվել հետևյալ եղանակներից որևէ մեկով, այն է՝ իմ կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ իմ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին<sup>2</sup> կամ հնարավորության դեպքում Ինտերնետ բանկ/մոբայլ բանկինգ համակարգի իմ էջին Պայմանագրի հետ կապված ծանուցումները, Բանկի կողմից Հաճախորդին ուղղված գրավոր պատասխանները, քաղվածքները, Բանկում գործող պայմանների ու սակագների փոփոխման, Կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման մասին տեղեկատվությունը, Բանկի կողմից իմ վերաբերյալ վարկային բյուրոյին կամ ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրին տեղեկատվություն տրամադրելու մասին ծանուցումները, Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում արտադատական բռնագանձման և դատական ծանուցումները, պահանջագրերը, նախապահանջները, նյութերը/փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվություն (այսուհետ՝ առանձին-առանձին կամ բոլորը միասին՝ **ծանուցում**) ուղարկելու/հասանելի դարձնելու միջոցով: Ընդ որում, մեկ եղանակով ծանուցումն ուղարկելու դեպքում Բանկը պարտավոր չէ ծանուցում իրականացնել նաև այլ այլընտրանքային եղանակ/ներով՝ անկախ այն հանգամանքից հաճախորդը ծանուցումը ստացել է, թե՛ ոչ:
- 1.2. Սույնով հայտնում եմ իմ համաձայնությունն առ այն, որ Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ Կողմերի իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ, դատարանը, պետական մարմինները և այլոք Բանկի պահանջով կարող են կիրառել ինձ հետ հաղորդակցման/ծանուցումների ներկայացման/ուղարկման սույն Պայմանագրով սահմանված կարգը:
- 1.3. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինձ ուղղված ծանուցումները իմ կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ իմ Ինտերնետ բանկ/մոբայլ բանկինգ համակարգի միջոցով ուղարկվելու դեպքում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված՝ անկախ այն հանգամանքից, թե ես փաստացի երբ եմ ստանում այդ ծանուցումը:
- 1.4. Ինձ ուղղված ծանուցումները իմ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու դեպքում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված, երբ առկա է այն ուղարկելու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը:

<sup>1</sup> Սույն հայտ-պայմանագրի հիման վրա Հաճախորդի համար բացվում է սահմանափակ հասանելիությամբ «Սմարթ» հաշիվ, որը Հաճախորդի ցանկությամբ կարող է դառնալ լիարժեք հասանելիությամբ «Սմարթ» հաշիվ՝ Հաճախորդի կողմից ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ամբողջական նույնականացում անցնելուց հետո:

<sup>2</sup> Ֆիզիկական անձին նույնականացման քարտի հետ մեկտեղ ՀՀ կառավարության սահմանած կարգով տրված էլեկտրոնային փոստը:

Վերջին դեպքում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված ծանուցումն ուղարկելուն հաջորդող 5-րդ /հինգերորդ/ օրվանից:

- 1.5. Սույնով հավաստում եմ, որ Պայմանագրի համաձայն ծանուցումը ուղարկելու մասին ինձ տեղեկացնելու այլընտրանքային եղանակ կարող է հանդիսանալ ձայնագրվող և արձանագրվող հեռախոսային կապի միջոցը կամ SMS հաղորդագրությունը:
- 1.6. Սույնով հայտնում եմ իմ համաձայնությունն առ այն, որ Բանկը, որևէ հիմքով սույն Պայմանագրով սահմանված ծանուցման եղանակ/ներ/ով ծանուցումն իրականացնելու անհնարինության դեպքում, կարող է որպես բարի կամքի դրսևորում իր հայեցողությամբ որպես հաղորդակցման լիարժեք այլընտրանքային եղանակ կիրառել ցանկացած հասցե/կապի միջոց/հեռախոսահամար, որը ես նշել եմ Պայմանագրում կամ այլ գրավոր եղանակով տրամադրել եմ Բանկին, կամ այն Բանկին հասանելի է դարձել այլ եղանակով:
- 1.7. Ես կրում եմ իմ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումը չկարդալու, ինչպես նաև Բանկի և իմ միջև հաղորդակցման համար անհրաժեշտ իմ որևէ տվյալի փոփոխության վերաբերյալ Բանկին չտեղեկացնելու արդյունքում վրա հասնող բոլոր անբարենպաստ իրավական հետևանքների ռիսկը:
- 1.8. Ծանուցումներն ինձ առձեռն հանձնվելու պարագայում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված՝ հրաժարվելով սույն Պայմանագրով համաձայնեցված որևէ եղանակով լրացուցիչ ծանուցվելուց:
- 1.9. Սույնով հանձնարարում եմ Բանկին արդիականացնել/թարմացնել «Բանկի և Հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարականում» զետեղված տեղեկատվությունը՝ ըստ սույն Պայմանագրի «Հաճախորդի անձնական տվյալներ» բաժնում նշված տեղեկատվության, ինչպես նաև հաղորդակցման եղանակ/ներ/ն ու կարգը՝ ըստ սույն Պայմանագրի 1 կետում նշված եղանակ/ներ/ի ու կարգի և արդյունքում իմ և Բանկի միջև հաղորդակցումը բոլոր բանկային ծառայությունների գծով իրականացնել Պայմանագրի 1 կետով սահմանված կարգով:

## 2. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ստորագրելով և/կամ Բանկ ներկայացնելով սույն Հայտ-պայմանագիրը «Համաձայն եմ» վանդակ/ներ/ում նշում/ներ կատարելով, ես՝ Հաճախորդս, գիտակցում եմ, համաձայնում և/կամ հավաստում եմ, որ.

- 2.1. Բանկին ներկայացնում եմ պայմանագրի կնքման ակցեպտ, որը Բանկ ներկայացվելու և Բանկի կողմից ակցեպտը ստանալու վերաբերյալ ինձ պատշաճ ծանուցելու, այն է՝ համապատասխան հաղորդագրություն իմ հեռախոսահամարին ուղարկելու կամ էլեկտրոնային տարբերակով այդ մասին ինձ հայտնելու պահից հանդիսանում է պատշաճ կնքված հաշվի բացման պայմանագիր և ինտերնետ / մոբայլ բանկինգ ծառայության տրամադրման պայմանագիր՝ դրանում նախատեսված պայմաններով:
- 2.2. Ամբողջությամբ ծանոթացել եմ իմ կողմից ընտրված բանկային հաշվի և ինտերնետ / մոբայլ բանկինգ ծառայության պայմաններին և հստակ գիտակցում եմ պայմանագրի կնքման արդյունքում ինձ համար վրա հասնող իրավական հետևանքները:

- 2.3. Ծանոթացել եմ Հայտ-պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Բանկի կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին»<sup>3</sup> և «Բանկի սակագներին ֆիզիկական անձ հաճախորդների համար»<sup>4</sup> (այսուհետ՝ նշված իրավական ակտերը միասին «Պայմաններ») ընդունում եմ դրանք և համաձայն եմ, որ դրանք Բանկի կողմից կարող են միակողմանի փոփոխվել:
- 2.4. Բոլոր ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկում իմ հաշիվներին, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:
- 2.5. Բանկն իրականացնի բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք պահանջվում են ըստ Ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրական և ներքին իրավական ակտերի, և միայն հաշվի բացումն արգելող հիմքերի բացակայության դեպքում համապատասխանաբար բացի/ակտիվացնի նշված բանկային հաշիվ/ներ/ը, իսկ հաշիվները բացելուց/ակտիվացնելուց հետո նման հիմքեր հայտնաբերելու դեպքում՝ փակի նշված բանկային հաշիվները և/կամ իրականացնի ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողություններ:
- 2.6. Հանձնարարում եմ Բանկին Ինտերնետ բանկ/մոբայլ բանկինգի ակտիվացման և օգտագործման համար անհրաժեշտ նույնականացման տվյալների համար կիրառել Պայմանագրում նշված իմ հեռախոսահամարն ու էլեկտրոնային փոստի հասցեն:
- 2.7. Իմ կողմից տրամադրված տեղեկությունները ճիշտ են և ամբողջական:
- 2.8. Հայտ-պայմանագրի ստորագրման պահին գործում եմ սթափ մտքով, իմ ազատ կամքի դրսևորմամբ՝ առանց որևէ մոլորության, խաբեության և հարկադրանքի ազդեցության, լիովին հասկանում և գիտակցում եմ իմ կողմից ստանձնվող պարտավորությունների իրավական բնույթը և դրանց չկատարման հետևանքները:
- 2.9. Բանկն ինձ համար «Մնարթ» հաշիվ բացելու և/կամ Բանկի նախաձեռնությամբ իմ վարկավորման հնարավորությունները դիտարկելու և/կամ վարկավորման առաջարկ ներկայացնելու և/կամ Պայմաններով կամ Հայտ-պայմանագրով ամրագրված ցանկացած կամ միաժամանակ նշված մի քանի կամ բոլոր նպատակ/ներ/ից ելնելով, առանց ինձ տեղեկացնելու հարցումներ կատարի և ստանա ներքոնշյալ տեղեկատվությունը.
  - 2.9.1. ՀՀ ԿԲ Վարկային Ռեզիստրից և/կամ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից, իմ ներկա և անցյալ դրամական պարտավորությունների մասին՝ Բանկում դրամական պարտավորություններ ստանձնելու/ունենալու, երրորդ անձի/անձանց պարտավորությունների երաշխավոր լինելու մասին:

<sup>3</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (11RBD RL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

<sup>4</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար (11RBD PL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

- 2.9.2. «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամից՝ իմ անձնագրային տվյալների և ներկա և անցյալ աշխատանքային գործունեության մասին:
- 2.9.3. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրումների գրասենյակից»՝ «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» հրապարակային փաստաթղթով<sup>5</sup> սահմանված/դասակարգված իմ անձնական տվյալների մասին:
- 2.10. Միաժամանակ տալիս եմ համաձայնություն, որպեսզի Բանկը փոխանցի իմ դրամական պարտավորությունների մասին իր ունեցած տեղեկատվությունը ՀՀ ԿԲ Վարկային Ռեգիստր և/կամ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ:
- 2.11. Մույնով հաստատում եմ նաև, որ վերոնշյալ տվյալների աղբյուր հանդիսացող վերոնշյալ մարմինները վերանվանվելու, վերակազմակերպվելու կամ այլ մարմիններով/աղբյուրներով փոխարինվելու դեպքում Հայտ-պայմանագրի 2.9 կետով սահմանված համաձայնությունը համարվում է տրված, եթե նշված համաձայնության հիման վրա ստացման ենթակա կամ տրամադրվող տեղեկատվության ծավալը մնում է նույնը:
- 2.12. Հայտ-պայմանագրի 2.9 կետով սահմանված համաձայնությունը, Պայմանները և «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» հրապարակային փաստաթուղթը<sup>5</sup> կարդացել եմ, նշված կետով սահմանված համաձայնության բովանդակությունն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է և հանդիսանում է իմ ազատ կամահայտության արդյունք: Ընդ որում, իմ կողմից Բանկին պահանջ ներկայացվելու դեպքում Բանկը կուղղի, կոչնչացնի անձնական տվյալները, կդադարեցնի դրանց մշակումը, կվերացնի նշված համաձայնությունը, կամ մշակման հետ կապված այլ գործողություն կկատարվի, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:
- 2.13. Հայտ-պայմանագրի 2.9 կետով սահմանված համաձայնությունը կիրառելի է իմ և Բանկի միջև հարաբերությունների ամբողջ ժամանակահատվածի համար:

---

<sup>5</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» (11RBD/12CIB LI 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 13/01/2021թ. թիվ 01/01/21 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>